ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/7Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 8-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/7Հ գնման պայմանագրում 2022 թվականի ապրիլի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 07.04.2022թ N469-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	NՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/7Հ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
08.06.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/7Հ գնման պայմանագրի

ք. Երևան «29» «04» 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՔԱՐԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.04.2022թ. N 469-Ն որոշումը և ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 08.06.2021թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/7Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկական) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԱՔԱՐԱ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Գյումրի, Ծուլուկիձե 5
կառավարական տուն 3	«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2472600008040000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 05524184
Հ/Հ 900011027605	Տնօրեն՝
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված
08.06.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/7Հ գնման պայմանագրի
«29» «04» 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	2021թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/82	ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն	1 138 380	-	-	-	-	1 228 000	1 228 000	1 964 800	1 964 800	1 964 800	2 456 000	2 456 000	2 456 000	2 456 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027605
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«ԱՔԱՐԱ» ՍՊԸ
ք. Գյումրի, Ծուլուկիձե 5
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 2472600008040000
ՀՎՀՀ 05524184
Տնօրեն՝

Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ